ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի, 2011 թվականի | **թիվ 785** | քաղ. Ալմաթի

«ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մաքսային միության հանձնաժողովը ***որոշեց.***

1. Փոփոխություններ և լրացումներ կատարել Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 376 որոշմամբ հաստատված «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգում»՝ հավելվածի համաձայն:

2. Հանձնարարել փորձագիտական խմբին մշակել մաքսային արժեքի հայտարարագրի էլեկտրոնային պատճենի կառուցվածքը և ձևը (ՄԱՀ-2 ձև)՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 304 որոշմամբ հաստատված «Մաքսային հայտարարագիրը լրացնելու համար օգտագործվող դասակարգիչների» մշակման համար:

3. Սույն Որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն Որոշման 2-րդ կետն ուժի մեջ է մտնում Մաքսային միության հանձնաժողովի համացանցային պաշտոնական կայքում սույն Որոշման պաշտոնական հրապարակման ամսաթվից:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	Ղազախստանի Հանրապետությունից	Ռուսաստանի Դաշնությունից
Ս. Ռումաս	Ու. Շուկեև	Ի. Շուվալով

Հավելված